

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԹՈՐՈՍՅԱՆ ՄԵԼԻՆԵ ԳԱԳԻՎԻ

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ԱՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Թ.00.06 – «Մշակութաբանություն» մասնագիտությամբ  
պատմական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2016

---

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ  
НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ТОРОСЯН МЕЛИНЕ ГАГИКОВНА

ОБЩЕСТВЕННОЕ ВОСПРИЯТИЕ КУЛЬТУРЫ В СОВРЕМЕННОЙ АРМЕНИИ

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени  
кандидата исторических наук  
по специальности 09.00.06 «Культурология»

ЕРЕВАН - 2016

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝ պ. գ. թ., Ն. Մ. Մարգարյան  
Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ. գ. դ., Հ. Տ. Մարության  
պ. գ. թ. Ա. Զ. Թադևոսյան

Առաջատար կազմակերպություն՝ Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան

Պաշտպանությունը կայանալու է 2016թ. հոկտեմբերի 6-ին, ժ. 14:00-ին ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 007 հնագիտության և ազգագրության մասնագիտական խորհրդում (հասցե՝ Երևան-0025, Չարենցի 15):

Մեղմագիրն առաքված է 2016 թ. սեպտեմբերի 6-ին:  
Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝  
Պատմական գիտությունների թեկնածու Հ. Ա. Մելքոնյան

---

Тема диссертации утверждена на ученом совете факультета истории ЕГУ

Научный руководитель: к. и. н. Маргарян Н. М.  
Официальные оппоненты: д. и. н. Марутян А. Т  
к. и. н. Тадевосян А. З.

Ведущая организация: Мемориальный комплекс Сардарapatской битвы, Национальный музей этнографии Армении и истории освободительной борьбы.

Защита состоится 6 октября 2016 г., в 14:00 часов, на заседании специализированного совета 007 ВАК по археологии и этнографии при Институте археологии и этнографии НАН РА (адрес: Ереван-0025, ул. Чаренца 15).

Автореферат разослан 6 сентября 2016 г.

Ученый секретарь специализированного совета

Кандидат исторических наук

Мелконян У.А.

**Հետազոտության արդիականությունը**

Ատենախոսության մեջ քննության են ենթարկվում արդի շրջանում մշակույթի՝ հայաստանյան հանրության ընկալումները: Անկախացմանը հաջորդած երկուս ու կես տասնամյակների ընթացքում Հայաստանում ստեղծվել են քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթական նոր ինստիտուտներ, ընդունվել են դրանց գործունեությունը կարգավորող բազմաթիվ որոշումներ և իրավական ակտեր, որոնց գործառնությունը, սակայն, թերի է և չունի հանրային լայն աջակցություն: Վերջինս նշանակալի չափով պայմանավորված է՝ մի կողմից այդ ոլորտների վերաբերյալ խորհրդային շրջանից ժառանգված ընկալումներով և, հատկապես՝ մշակույթի ընկալումներով, մյուս կողմից՝ արդի շրջանում դրանց նշանակության և գործառնությունների վերաբերյալ ոչ բավարար գիտելիքներով, ինչի հետևանքում ձգձգվում և խոչընդոտվում են բարեփոխումները:

**Աշխատանքի նպատակն ու խնդիրները**

Ատենախոսական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել և ներկայացնել մշակույթի վերաբերյալ հետխորհրդային հայ հանրության շրջանում գոյություն ունեցող ընկալումները:

Աշխատանքի հիմքում ընկած է այն կանխադրույթը, որ այնպիսի մի կարևոր ֆենոմենի հետ կապված ընկալումները, ինչպիսին է մշակույթը, ուղղորդում են միջավայրի տարբեր երևույթների նկատմամբ մեր մտեցումներն ու գործողությունները: Ուստի, աշխատանքի կարևոր խնդիրներից էին՝ պարզել, թե ինչպես է ընկալվում մշակույթը, և ինչ եղանակով են մշակույթի հետ կապված ընկալումները վերարտադրվում հանրային և անհատական պրակտիկաներում:

Ընկալումներն իրենց հերթին սոցիալ-մշակութային ֆենոմեններ են և ձևավորվում են որոշակի պատմական պայմաններում, որոշակի գործոնների և հանգամանքների ազդեցությամբ, որոնք ուղղորդում են արտաքին աշխարհի ազդակների ընտրությունը, կազմակերպումը և մեկնաբանումը: Սույն ատենախոսական աշխատանքի կարևորագույն խնդիրներից մյուսը մշակույթի ընկալումներ ձևավորող գործոնների և հանգամանքների ուսումնասիրությունն էր: Այդ նպատակով անդրադարձել էինք կրթական համակարգում (դպրոցական դասագրքերում), ԶԼՄ-ներում՝ էլեկտրոնային և տպագիր մամուլում, հեռուստատեսությամբ և պետական մարմինների (Մշակույթի նախարարություն, ՀՀ կառավարություն) կողմից մշակույթի վերաբերյալ ներկայացվող տեղեկատվությանը և իրականացվող միջոցառումներին:

**Աշխատանքի գիտական նորույթ**

Ատենախոսական ուսումնասիրության տեսանկյունից և ընդհանրապես հայագիտության ասպարեզում առաջին անգամ է մշակույթը քննարկվում ընկալման տեսանկյունից:

Ատենախոսական աշխատանքում առաջին անգամ փորձ է արվել համատեղելու ազգագրական, սոցիոլոգիական, տեքստաբանական վերլուծությունների տարբեր

մոտեցումները: Ինչպես նաև, աշխատանքում առաջին անգամ փորձ է արվել ուսումնասիրել մշակույթի և վերջինիս հետ ավանդաբար չկապվող սոցիալական, քաղաքական, տնտեսական, հոգեբանական, ժողովրդագրական և այլ ֆենոմենների առնչությունները (ըստ հանրային ընկալումների):

### **Աշխատանքի գործնական նշանակությունը**

Ատենախոսական աշխատանքում առաջադրված նպատակադրումը կարող է ծառայել որոշակի կիրառական նպատակի՝ անհրաժեշտության դեպքում նպաստել հայաստանյան հանրության շրջանում մշակույթի մասին գոյություն ունեցող ոչ կառուցողական պատկերացումները և ընկալումները փոփոխելու վերաբերյալ քննարկումներ ծավալելուն, դրանց հասնելու մեխանիզմներ և միջոցներ մշակելուն:

Աշխատանքի շրջանակներում կատարված հետազոտությունների արդյունքում հավաքվել են բավականին ծավալուն և բազմակողմանի ազգագրական, փաստաթղթային նյութեր, որոնք կարող են օգտագործվել ինչպես զուտ մշակութային, այնպես էլ՝ հումանիտար ու սոցիալական համապարփակ խնդիրների վերաբերող ամենատարբեր հետազոտություններում:

### **Հետազոտության մեթոդաբանությունը**

Աշխատանքի հետազոտական հիմքը կազմում են հարցաթերթային և խորացված հարցումները, փաստաթղթի հետազոտությունը: Խորացված և հարցաթերթային հետազոտություններն իրականացվել են ՀՀ բոլոր մարզերում, յուրաքանչյուր մարզում՝ մեկ քաղաքային և երկու գյուղական համայնքներում (Սյունիքի մարզ՝ Գորիս, Քարահունջ, Շվանիձոր, Գեղարքունիքի մարզ՝ Գավառ, Ծովագյուղ, Գեղամավան, Վայոց Ձորի մարզ՝ Եղեգնաձոր, Գլաձոր, Զեղեա, Լոռու մարզ՝ Վանաձոր, Դարպաս, Շահումյան, Շիրակի մարզ՝ Գյումրի, Բավրա, Փանիկ, Արագածոտնի մարզ՝ Աշտարակ, Ն. Սասնաշեն, Արագած, Գոտայքի մարզ՝ Զարենցավան, Զրաբեր, Պռոշյան, Տավուշի մարզ՝ Իջևան, Գետահովիտ, Ոսկեպար, Արմավիրի մարզ՝ Հոկտեմբերյան, Մերձավան, Ջանֆիդա, Արարատի մարզ՝ Արտաշատ, Սայաթ-Նովա, Շահումյան, և Երևան: Լրացուցիչ նյութեր քաղաք Սպիտակ (Լոռու մարզ) և Քարահունջ գյուղ (Սյունիքի մարզ): Խորացված և հարցաթերթային հարցումներն անցկացվել են հինգ տարիքային խմբերում՝ 1)16-24, 2)25-34, 3)35-44, 4)45-64, 5)65 և բարձր: Հարցաշարում և հարցաթերթում կարևորել ենք նաև սոցիալ-ժողովրդագրական այնպիսի բնութագրեր, ինչպիսիք են հարցվողների սեռը, կրթությունը, մասնագիտությունը, զբաղվածությունը, զբաղվածության ոլորտը: Հետազոտություններն անցկացվել են 2012-2014 թվականներին: Ընդհանուր առմամբ իրականացվել է 225 խորին հարցազրույց և 514 քանակական հարցումներ: Աշխատանքում օգտագործված են նաև փորձագիտական հարցազրույցների նյութեր, որոնցում ներգրավված են արվեստաբաններ, մշակույթի նախարար, թանգարանների աշխատողներ ու տնօրեններ, անկախ մեդիա փորձագետ, լրագրող, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի փորձագետ, ազգագրագետ, ՀՀ ԳԱԱ գիտաշխատողներ, գրող, հեռուստառեժիսոր, էթնոսոցիոլոգ և այլն: Հետազոտված

փաստաթղթային նյութերն ենթարկվել են բովանդակային և դիսկուրս վերլուծության:

Հարցազրույցների և հարցումների միջոցով ստացված տվյալները վերլուծության են ենթարկվել «Սոցիալական գիտությունների վիճակագրական փաթեթ» (SPSS-Statistical Package for Social Science) ծրագրի միջոցով:

### **Աշխատանքի պաշտոնական հավանությունը**

Աշխատանքի առանձին հատվածներ ներկայացվել են հրատարակված հոդվածներում:

Ատենախոսությունն ամբողջությամբ քննարկվել և հավանության է արժանացել ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Մշակութաբանության ամբիոնում: Քննարկման մասնակիցների արված նկատառումները հաշվի են առնվել ատենախոսության վերջնական տարբերակում:

### **Աշխատանքի կառուցվածքը**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից, հավելվածից: Յուրաքանչյուր գլուխ ներառում է երեք ենթագլուխներ: Հավելվածում ներկայացված են նաև դիագրամներ և աղյուսակներ:

## **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

### **Ներածություն**

Ներածությունում ներկայացված են ատենախոսական աշխատանքի նպատակն ու ինդիքները, մեթոդաբանությունը, հիմնական հասկացությունները, աղբյուրների և գրականության համառոտ տեսությունը, արդիականությունը, գիտական նորույթը:

Ներածությունում անդրադարձել ենք աշխատանքի տեսական շարադրանքի համար առանձնակի նշակություն ունեցող հեղինակների աշխատություններին և տեսություններին, մեկնաբանել դրանց կիրառման անհրաժեշտությունը մեր աշխատանքում: Այդ հեղինակների թվում են՝ Պ. Բուրդյե, Ա. Շյուց, Ի. Գոֆման, Փ. Բերգեր և Թ. Լուքման, Մ. Ֆուկո, Մ. Յորգենսեն և Լ. Ֆիլիպս, Հ. Լասսուել, Կ. Կլաքհոն և Ա. Քրյոբեր, Է. Գիդենս և այլք: Այնուհետև անդրադառնում ենք աշխատանքը համապատասխան գլուխների և ենթագլուխների բաժանելու սկզբունքների մեկնաբանմանը և համառոտ ներկայացնում դրանցում արծարծվող թեմաները:

Քանի որ նշված թեմայով հետազոտություն իրականացվում էր առաջին անգամ, ապա դրա արդյունավետության համար անհրաժեշտ էր տարբեր հետազոտական մոտեցումների և տեխնիկաների օգտագործում, որոնք թույլ կտային ավելի խորը ներթափանցել ուսումնասիրվող խնդրի մեջ: Ներածությունում անդրադառնում ենք նաև ընտրված մեթոդների համառոտ նկարագրությանը և մեկնաբանությանը:

Աշխատանքը վերնագրված է «Մշակույթի հանրային ընկալումներն արդի Հայաստանում», որտեղ կիրառված «արդի» բառը հումանիշն է այժմյան, ներկայիս,

ժամանակակից բառերին: «Արդի» ասելով աշխատանքում նկատի ունենք հետխորհրդային ժամանակաշրջանը:

## **Գլուխ I. Հանրային ընկալումների ձևավորման և վերարտադրման մեխանիզմները**

### **1.1 Ընկալման դիսկուրսիվ բնույթը**

Այս գլխի նպատակն է ներկայացնել «ընկալում» հասկացությունը, դրա սահմանումը, ընկալումների փոխանցման և փոխակերպման առանձնահատկությունները: Ընկալումը դասվում է այն հասկացությունների շարքին, որի վերաբերյալ մոտեցումները միանշանակ չեն: Երբ հոգեբաններն են ձևակերպում ընկալումը, նրանք սովորաբար նկատի ունեն այն գործընթացները, որոնց միջոցով մարդիկ կազմավորում և աշխատեցնում են զգայական ծագմամբ տեղեկատվությունը: Սոցիալական և մշակութային մարդաբանները հակված են ընկալում բառն օգտագործել ավելի լայն իմաստով՝ ընդգրկելով կյանքի հանդեպ հայացքները, աշխարհընկալումը, իրադարձությունների մեկնաբանումը և այլն:

Այս ենթագլխի նպատակն է ցույց տալ, որ ընկալումն ունի դիսկուրսիվ բնույթ. այսինքն կախված է այն տեքստերից, թե ինչի մասին է խոսվում, ինչպիսի արժեքներ ու նպատակներ են կարևորում տեղեկություն փոխանցող ինստիտուտները, ինչպիսի լեզվով են տեղեկացնում, ով է տեղեկացնում, և որ ժամանակամիջոցում է տեղեկությունը փոխանցվում:

Այս ենթագլխում անդրադարձել ենք նաև հանրային կարծիքի և հանրային ընկալման տարբերություններին, որպեսզի պարզաբանենք, թե ինչու ենք նախապատվությունը տվել հանրային ընկալման, այլ ոչ թե հանրային կարծիքի ուսումնասիրությանը: Քննելով հանրային կարծիքի և հանրային ընկալման տարբերությունները ակնհայտ դարձավ մեր աշխատանքի համատեքստում հանրային ընկալում հասկացության օգտագործման արդյունավետությունը, քանի որ ընկալումն ավելի հիմնավոր, արմատացած երևույթ է, ավելի դժվարությամբ և դանդաղ է ենթարկվում փոփոխությունների: Նշվածը հնարավորություն է տալիս հասկանալ անհատի կամ հանրության շրջանում կոնկրետ ժամանակահատվածին բնորոշ մտածելակերպը և վարքը, ինչպես նաև՝ անախրոնիկ վիճակներում իրականության և մտածողության միջև ծագող խնդիրների պատճառները: Բացի այդ, ընկալման ձևավորման վրա ազդեցություն ունեն ոչ միայն տեղեկատվական միջոցներն ու անհատները կամ խմբերը (ինչպես կարծիքի դեպքում է), այլ նաև մշակութային միջավայրը կրթական համակարգը, ընտանիքը, համայնքը, ինչն ավելի է կարևորում ընկալման ուսումնասիրությունը:

### **1.2 Գիտելիքի հանրայնացման եղանակները և միջոցները /փոխանցման մեխանիզմներ/**

Քանի որ մեր աշխատանքի հիմնական խնդիրներից է պարզել, թե ինչպես են գիտելիքները, կոնկրետ դեպքում՝ մշակույթի վերաբերյալ գիտելիքներն ազդում մեր

վարքի և գործունեության վրա, այս ենթագլխում անդրադարձել ենք, թե ինչպես են փոխանցվում և տարածվում գիտելիքները հանրության շրջանում, որոնք են դրանց փոխանցման մեխանիզմներն ու հանրայնացման եղանակները: Այդ նպատակով անդրադարձել ենք գիտելիքի ձևավորման խնդրին վերաբերվող մի շարք ուսումնասիրությունների, որոնք իրականացվել են Մ. Միդլի, Փ. Բերգերի և Թ. Լուքմանի կողմից: Հատուկ քննության ենք առել նաև Հ. Լասսուելի՝ հաղորդակցության մոդելը, և գիտելիքի փոխանցման վերաբերյալ նրա դիտարկումները, ինչպես նաև Ա. Ուսմանովայի՝ գիտելիքի գաղափարախոսական-քաղաքական բնույթին վերաբերվող մեկնաբանությունները: Որպես գիտելիքի գաղափարախոսական բնույթը բացահայտող միջոց անդրադարձել ենք դիսկուրս վերլուծությանը:

### 1.3 Ընկալման հարթույթի բնույթը և գիտելիքի վերարտադրությունը

Մեր խնդիրն է այս ենթագլխում ցույց տալ, թե ինչպես է կոլեկտիվ նախնական փորձառությունը պայմանավորում երևույթների ընկալումը: Այդ տեսանկյունից առավել նպատակահարմար ենք համարել ընկալումը դիտարկել տարբերությունների համեմատության ծիրում, մասնավորապես, խորհրդային և հետխորհրդային սերունդների ընկալումների տարբերությունների, և դրանց պատճառների քննության հարթությունում:

Ընկալման հարթույթի բնույթն որոշարկելու համար անդրադարձել ենք մի քանի առանցքային հասկացությունների, որոնք կապված են հարթույթի հասկացության հետ՝ հարթույթ, հարթույթի նախահակումներ, խորհրդային հարթույթ: Անդրադարձել ենք նաև կառուցողական կառուցվածքաբանության առանձնահատկություններին, որը դիտարկել ենք կառուցվածքաբանության հետ համեմատության շրջանակներում:

## **Գլուխ II. Մշակույթի հանրային ընկալման առումները**

### 2.1 Մշակույթի սահմանները

Մույն ենթագլխում դիտարկել ենք, թե մշակույթի սահմանումների և մոտեցումների բազմազանության պայմաններում, ժամանակային և համապարփակ առումներով ինչպիսի՞ առանձնահատկություններ են առկա մշակույթի մասին հանրային ընկալումներում ու պատկերացումներում: Որո՞նք են այն հիմնական ոլորտներն ու հասկացությունները, որոնք ընկալվում և մեկնաբանվում են իբրև մշակույթ: Նշված հարցադրումները քննարկել ենք ըստ զենդերային, տարիքային, կրթական, մասնագիտական կտրվածքների, ըստ զբաղվածության, զբաղվածության ոլորտի և բնակավայրի:

Ժամանակային առումով մշակույթի ընկալումները դիտարկել ենք ավանդականի և ժամանակակիցի համեմատության հարթությունում՝ որպեսզի պարզենք, թե հանրային ընկալումներում մշակույթն ինչի հետ է ասոցացվում անցյալի ձեռքբերումների և իրադարձությունների, թե՞ ժամանակակից

գործընթացներն ու երևույթները նույնպես ընկալվում են որպես այդպիսին: Մեր հաջորդ դիտարկումը վերաբերվում է մշակույթի համապարփակության բացահայտմանը՝ ըստ մակրո և միկրո հարթությունների: Մասնավորապես, մեզ հետաքրքիր է, թե հանրային ընկալումներում մշակույթը ներկայանում է համապարփակ-օբյեկտիվ, թե՞ առօրեական-սուբյեկտիվ դրսևորումներով: Հետազոտության ընթացքում փորձել ենք պարզել նաև, թե ընկալումներում որքանով է կարևորվում մշակույթի հայկական լինելու հանգամանքը:

Այսպիսով, մշակույթի սահմանների վերաբերյալ իրականացված հետազոտության արդյունքում ստացվում է՝

➤ Ժամանակային առումով ընկալումներում գերակշռում են մշակույթի այն մոտեցումները, որոնք կապված են ավանդականի, անցյալի ձեռքբերումների հետ: Ժամանակակից գործընթացներն ու երևույթները հանրության կողմից դեռ չեն ընկալվում որպես մշակութային:

➤ Մակրո և միկրո համեմատական հարթությունում մշակույթի ընկալումները հիմնականում արտահայտվում են համապարփակ-օբյեկտիվ դրսևորումներով, այսինքն՝ մակրո հարթությունում են: Այն առավել արտահայտված է մեծամասամբ երիտասարդ (16-24 տտ.) և բարձրագույն կրթություն ունեցող հարցվողների պատասխաններում, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ բարձրագույն կրթական համակարգը (մշակութային կապիտալը) հնարավորություն է տալիս երևույթներին նայել ավելի լայն, քան դրանց վարժեցվում են հաբիթուալ մակարդակում:

➤ Հետազոտության մասնակիցները, գրեթե հավասար համամասնությամբ, մշակույթ ասելով հասկանում են և՛ հայկականը և՛ ոչ հայկականը: Այստեղ ևս պետք է նշենք բարձրագույն կրթական համակարգի ունեցած դերն ընկալման ձևավորման վրա, քանի որ մշակույթն ավելի բազմակողմանի, լայն և ազգայինի սահմաններից դուրս ընկալվում է բարձրագույն կրթությամբ հարցվողների շրջանում:

➤ Հանրային ընկալումներում մշակույթն առավելապես ասոցացվում է արվեստի ոլորտների հետ: Ընդ որում, մշակույթի նման ընկալումները գերակշռում են 45-64 տտ. խմբի հարցվողների մոտ:

## 2.2 Մշակույթին վերագրվող գործառույթները

Աշխատանքի այս մասում հիմնվելով հարցվողների պատասխանների վրա՝ ներկայացրել ենք, թե ինչպիսի գործառույթներ են վերագրվում մշակույթին: Նման նպատակադրումը թույլ է տվել բացահայտել, թե ինչպես է ընկալվում մշակույթի դերակատարությունը հանրային ու պետական կյանքի ամենատարբեր ոլորտներում և մակարդակներում:

Մասնագիտական գրականությունում ներկայացվում է, որ մշակույթն իրականացնում է շատ կարևոր գործառույթներ և՛ հասարակության, և՛ անհատի համար: Մշակույթի միջոցով է անհատը դառնում հասարակության լիարժեք անդամ, հարմարվում շրջակա միջավայրին, հնարավոր է դառնում մարդկանց հետ շփումը, համակենտրոնացվում տարբեր սերունդների մարդկանց փորձը և հմտությունները, կարգավորվում հասարակության անդամների համար կարևոր



նորմերն ու պահանջմունքները և այլն: Անշուշտ, ակնկալելի էր, որ հարցվողների ընկալումներում մշակույթի գործառույթներն այս չափ տարբերակված և վերացարկված չէին կարող ներկայացվել: Գլխավոր խնդիրը հարցման մասնակիցներին՝ իրենց հասանելի դիսկուրսի շրջանակում մտիվավորող հարցադրումներ առաջարկելն էր: Այդ առումով անհրաժեշտ էր մի կողմից օգտվել հայտնի ու մատչելի բառապաշարից, մյուս կողմից՝ համեմատության որոշակի հնարավորություն ապահովել: Ելնելով նշված պայմաններից՝ հարցման մասնակիցներին առաջարկվել է հարց և առաջադրված հետևյալ ոլորտները՝ զինված ուժեր, տնտեսություն, արտաքին քաղաքականություն, բնապահպանություն, սոցապահովություն, սպորտ, կրթություն, մշակույթ, կրոն, գիտություն, օրենսդիր, իրավապահպան: Հարցվողներին առաջարկվել է տրված հարցի շրջանակներում նշել առավելագույնը երեք ամենակարևոր ոլորտները: Ինչպես ցույց են տալիս հարցման արդյունքները՝ վերը թվարկված ոլորտներից որպես ազգապահպանման և ազգի զարգացման առաջնային երեք ոլորտներ նշվել են՝ զինված ուժերը, կրթությունը և տնտեսությունը: Մշակույթն այս շարքում զբաղեցնում է ութերորդ տեղը՝ վերը նշված ոլորտներից, սոցապահովությունից, արտաքին քաղաքականությունից, կրոնից և օրենսդիրից հետո:

Կարելի է ասել, որ եթե միջին և բարձր տարիքի հարցվողների շրջանում շարունակվում են արմատացած մնալ խորհրդային ժամանակներից եկող մշակութային պատկերացումները, խորհրդային հաբիթուսով պայմանավորված ընկալումները, ապա վերջին ժամանակներում տարբեր դիսկուրսներում մշակույթի քննարկումը նպաստում է երիտասարդ սերնդի ընկալումներում մշակույթի վերաբերյալ փոփոխություններին:

Մշակույթի տեղը ազգի գոյատևման և զարգացման միջոցների շարքում դիտարկելուց զատ՝ այս ենթազիխում փորձել ենք պարզել նաև վերջինիս տեղն ու կարևորությունը երկրում տեղի ունեցող իրադարձությունների ընդհանուր համատեքստում: Փորձել ենք տեսնել, թե որքանով են կարևորվում և ուշադրության արժանանում «մշակույթի» հետ կապված իրադարձությունները հասարակության շրջանում: Այսպես, երկրում տեղի ունեցող հայտնի իրադարձությունների շարքում մշակույթը կրկին զբաղեցնում է ոչ առաջնային տեղ՝ տնտեսական, քաղաքական, քրեական, բնապահպանական իրադարձություններից հետո:

Այսպիսով, հիմնվելով մեր հետազոտությունների վրա՝ կարելի է ասել, որ ըստ հանրային ընկալումների՝ ազգապահպան և զարգացում ապահովող ոլորտների շարքում մշակույթն ունի ածանցյալ կարևորություն: Ակնկալելի էր, որ հարցվողների մեծամասնությունը կարող էր տեղյակ չլինել մասնագիտական տեքստերում մշակույթին վերագրվող գործառույթներին (ադապտատիվ, ճանաչողական, հաղորդակցային, ինտեգրատիվ, կարգավորող, արժեքային, լիցքաթափման և այլն) ամենայն մանրամասնությամբ, այդուհանդերձ, նույնքան անսպասելի էր նաև դրանց վերաբերյալ գոնե ընդհանուր գծերով տեղեկացված չլինելու փաստը: Այդ հանգամանքը, ինչպես պարզվում է ատենախոսության

երրորդ գլխում, պայմանավորված է կրթական համակարգի և զանգվածային լրատվամիջոցների փոխանցած տեղեկատվության սահմանափակությամբ:

### 2.3 Արդի մի շարք հիմնախնդիրների և մշակույթի փոխառնչությունները

Հայաստանի անկախացմանը հաջորդած ժամանակաշրջանում առաջ եկան մի շարք խնդիրներ, որոնց մի մասը ժառանգվել էր նախկին քաղաքական համակարգից, իսկ մյուսներն էլ հայտնվեցին նոր համակարգի պայմաններում: Խնդիրներն առկա էին գրեթե բոլոր ոլորտներում՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, իրավական, կրթական, առողջապահական, էկոլոգիական, մշակութային և այլն: Այս խնդիրների լուծման վերաբերյալ հասարակության տարբեր շերտերում տարբեր մեխանիզմներ են առաջադրվում: Մեր նպատակն է պարզել, թե հանրային ընկալումներում արդյո՞ք գիտակցվում է դրանց և մշակութային գործոնի միջև կապը, և ի՞նչ չափով է այն գիտակցվում: Ուստի, մեր հարցումների ժամանակ առանձնացրել ենք երկրում առկա մի շարք հիմնախնդիրներ որոնց մասին պարբերաբար բարձրաձայնվում է և՛ ՋԼՄ-ների, և՛ կառավարության, և՛ հասարակության կողմից. դրանք են՝ ինքնասպանություն, ամուսնալուծությունների թվաճ, տնտեսական և էկոլոգիական ճգնաժամ, կոռուպցիա, արտագաղթ, ծնունդների թվի նվազում, աղքատություն, գործազրկություն, սրտանոթային հիվանդությունների տարածում և կրթական համակարգում առկա խնդիրներ: Միննույն ժամանակ փորձել ենք պարզել, թե տարբեր խմբերի (տարիքային, գենդերային, կրթական և այլն) մարդիկ ինչի՞ հետ են կապում գոյություն ունեցող հիմնախնդիրները:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հանրային դիսկուրսում՝ հիմնախնդիրների առաջացման հիմքում իբրև գլխավոր պատճառ նշվում է սոցիալ-տնտեսական գործոնը: Մակայն, մյուս կողմից պետք է փաստել, որ հանրային ընկալումներում արդեն իսկ նկատվում են երկրում առկա որոշ հիմնախնդիրների և մշակույթի միջև ուղղակի և անուղղակի կապակցման փորձեր (հանձին առավել երիտասարդ տարիքային խմբերի և հետխորհրդային շրջանում բարձրագույն կրթություն ստացած հարցվողների մի մասի պատասխաններին):

Կարելի է ասել, որ հիմնախնդիրների ընկալման և մեկնաբանման մեջ հստակ երևում է խորհրդային և հետխորհրդային հաբիթուսների և մշակութային կապիտալի տարբերությունները: Խորհրդային սերնդի կողմից շարունակվում է աշխատատեղերի և ապրուստի ստեղծման ողջ պատասխանատվությունը վերագրվել բացարձակապես պետությանը. պետության մեղավորությունը տեսնում են նույնիսկ սեփական արարքների պատճառներում՝ միջավայրի աղտոտում, ինքնասպանություն: Մինչդեռ, երիտասարդ սերնդի հարցվողների շրջանում նկատվում են խորհրդային հաբիթուսից շեղվելու մասնակի փորձեր, որին, ամենայն հավանականությամբ, նպաստում է ներկայումս ինքնակրթության միջոցների բազմազանությունը, տեղեկատվական միջոցների՝ մասնավորապես համացանցի զարգացման հանգամանքը, ինչպես նաև կրթական համակարգերում նոր առարկաների դասավանդումը:

### **Գլուխ III. Մշակույթի հանրային ընկալումները ձևավորող ֆորմալ և ոչ ֆորմալ գործոնները**

#### **3.1 Ֆորմալ և ոչ ֆորմալ գործոնների խորհրդային և հետխորհրդային բնութագրերը**

Աշխատանքի այս գլխում անդրադարձել ենք մշակույթի ընկալումները ձևավորող ֆորմալ և ոչ ֆորմալ գործոններին, փորձել ենք պարզել վերջիններիս յուրահատկությունները խորհրդային և հետխորհրդային ժամանակահատվածներում:

Խորհրդային ժամանակաշրջանին անդրադառնալը կարևորվում է այն հանգամանքով, որ հետխորհրդային Հայաստանում շատ երևույթներ դեռ շարունակում են կրել խորհրդային շրջանի ազդեցությունը, ինչպես ընկալումների ու պատկերացումների, այնպես էլ կիրառական մակարդակներում:

Խորհրդային Միության պատմությանն անդրադարձել ենք երկու գաղափարական հղացքների միջոցով՝ ամբողջատիրական և հիմնաշենքային (բազիսային): Համաձայն մարքսյան բազիսային տեսության՝ հասարակության հիմքն ու շարժիչ ուժը ոչ թե մարդկանց գաղափարները, ձգտումներն ու նպատակներն են, այլ՝ նյութական բարիքների արտադրությունը: Բազիսը տնտեսությունն է, իսկ նրա վրա հիմնվում են մյուս ոլորտները՝ քաղաքական, իրավական, բարոյական և այլ հայացքները ու նրանց համապատասխան հաստատությունները՝ պետությունը, կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները և այլն՝ որպես վերնաշենք: Այդ իսկ պատճառով Խորհրդային Միության գոյության ողջ ընթացքում մշակույթը, որպես իրականացվող քաղաքականության մաս, մյուս ոլորտների նման ածանցվել է տնտեսությանը: Հաջորդ գաղափարական հղացքը, որի միջոցով կարելի է ներկայացնել և հասկանալ Խորհրդային Միության պատմությունը՝ ամբողջատիրական համակարգն էր, երբ բոլոր կառույցները գտնվում էին «շղթայական կապի» մեջ, որը գլխավորում և ղեկավարում էր միության առաջնորդը: Իշխանական կառույցներում էր որոշվում ոչ միայն քաղաքական, տնտեսական ինստիտուտների հետ քաղաքացիների հարաբերվելու սկզբունքները, եղանակները, այլև, որոշ դեպքերում, նաև նրանց կենցաղի կազմակերպման նորմերը: Այդ համակարգից անմասն չէր մնում նաև մշակույթային ոլորտը կազմակերպող ապարատը: Այդպիսով, տոտալ համակարգը նպաստում էր միասեռ մշակույթի ստեղծմանը, ինչպես նաև տարածմանը: Եթե դիտարկենք այն բոլոր լծակները, որոնց միջոցով խորհրդային կառավարությունը նպաստում էր հանրության ընկալումների ձևավորմանը, ապա այն նույնպես իրականացվում էր տոտալ սկզբունքով: Փաստորեն, կարող ենք ասել, որ խորհրդային միությունում ընկալումը ձևավորող ֆորմալ բոլոր միջոցները ղեկավարվում էին գլխավորապես նույն տեղից, և տարբերությունների մակարդակը խորհրդային միության ներսում բազմաթիվ ասպարեզներում աննշան էր:

Անդրադառնալով հետխորհրդային շրջանին՝ արդեն կարող ենք խոսել անհամեմատ ավելի ազատ և ինքնավերահսկվող զանգվածային լրատվամիջոցների մասին, ինչպես հեռուստատեսության, այնպես էլ մամուլի և ռադիոյի առումով: Տեղեկատվության տարածման առումով հետխորհրդային շրջանն ունի մեկ առավելություն ևս՝ համացանցը: Հետխորհրդային շրջանում նվազագույնի է հասցված տոտալ գրաքննությունը, և, մասնավորապես, մամուլի ոլորտում: Ֆորմալ առումով ընկալում ձևավորող կարևոր գործոններից կրթական համակարգը ևս տարբեր է խորհրդային և հետխորհրդային ժամանակներում՝ դասավանդվող առարկաներով և մոտեցումներով: Խորհրդային կրթական համակարգում դասավանդվող առարկաների մեծ մասը վերաբերվում էր ԽՍՀՄ պատմությանն ու գաղափարախոսությանը, որը պետք է նպաստեր խորհրդային մարդու կերտմանը: Հետխորհրդային շրջանում սկսվում են այնպիսի առարկաների դասավանդումը, ինչպիսիք են Հայ եկեղեցու պատմությունը՝ դպրոցում, Մշակութաբանությունը՝ բարձրագույն կրթական հաստատություններում:

Ինչ վերաբերվում է ընկալումները ձևավորող ոչ ֆորմալ գործոններին, ապա, դրանց տարբերությունները գրեթե աննշան են, քանի որ դրանց հիմքում ընկած է հաբիթուսը, որը շատ դանդաղ է ենթարկվում փոփոխությունների: Մշակույթի վերաբերյալ (և ընդհանրապես ցանկացած երևույթի) ընկալումները, որոնք ձևավորվել են խորհրդային ժամանակաշրջանում, որոշ դեպքերում փոխանցվել են նաև հետխորհրդային սերնդին: Այդ ընկալումների փոխանցումը տեղի է ունենում գրեթե բոլոր հարթություններում՝ ընտանեկան, կրթական, նաև տեղեկատվական, որտեղ բացառություն է կազմում միայն համացանցը, քանի որ վերը թվարկված բոլոր ոլորտները ղեկավարվում են խորհրդային ընկալումները կրող անհատների կողմից: Խորհրդային սերնդի ընկալումներում մշակույթի արվեստաբանական ընկալումները շատ խորն են, քանի որ այդ ընկալումները ձևավորելու համար, ինչպես նկատեցինք, խորհրդային կառավարությունն իրականացրել է բավականին կանխամտածված և հետևողական քաղաքականություն: Եվ, չնայած այն հանգամանքին, որ այսօր բացակայում են պարտադրողական քաղաքականությունն ու ամբողջատիրական գաղափարաբանությանը բնորոշ հետևողականությունը, այդուհանդերձ, ինքնահոս կերպով, խորհրդայինին բնորոշ գործելաձևը և մոտեցումները շարունակվում են դեռ հանդիպել հետխորհրդային ֆորմալ տեղեկատվական ոլորտներում: Սա ոչ այլ ինչ է, քան կոլեկտիվ հաբիթուսի դրսևորում, կամ ավելի ստույգ՝ խորհրդային հաբիթուսի դրսևորում:

Այսպիսով, կարող ենք ասել՝ չնայած խորհրդային և հետխորհրդային շրջաններում տեղեկատվության աղբյուրներն ու այն իրականացնող մարմիններն ու սկզբունքները տարբեր են, սակայն, մշակույթի վերաբերյալ տեղեկատվությունը, շատ առումներով, դեռևս կրկնում է նախկինին:

### *3.2 Մշակույթի հանրային ընկալումներ ձևավորող ֆորմալ գործոնները*

Աշխատանքի այս ենթազվիսի հիմնական նպատակն է ուսումնասիրել այն բոլոր ֆորմալ գործոնները, որոնք նպաստում են մշակույթին վերաբերվող

տեղեկատվության ընտրությանը, դասակարգմանը և մեկնաբանմանը, այսինքն այն ամենին, ինչը կազմում է մշակույթի ընկալման էությունը: Այդ նպատակով անդրադարձել ենք կրթական համակարգում (դպրոցական դասագրքերում), ՋԼՄ-ներում՝ էլեկտրոնային և տպագիր մամուլում, հեռուստատեսությամբ, և պետական մարմինների (Մշակույթի նախարարություն, ՀՀ կառավարություն) կողմից մշակույթի վերաբերյալ ներկայացվող տեղեկատվությանը և իրականացվող միջոցառումներին:

Հաշվի առնելով տարիքային առումով մեր հարցվողների տարասեռ խմբային բնույթը, մասնավորապես, միջին և բարձր տարիքի հարցվողների առկայությունը՝ անդրադարձել ենք ինչպես հետխորհրդային, այնպես էլ խորհրդային ժամանակաշրջանի դպրոցական դասագրքերին, որոնցում ներկայացված մշակութային թեմաները նպաստել են նրանց մշակույթի ընկալման ձևավորմանը (խորհրդային ժամանակաշրջանի դպրոցական դասագրքերից բովանդակային վերլուծության են ենթարկվել՝ 8-10-րդ դասարանների Նորագույն պատմություն, Հայ ժողովրդի պատմություն, Նոր պատմություն և Գրականություն դասագրքերը: Հետխորհրդային ժամանակահատվածի դասագրքերից (4-10-րդ դասարանների) քննության են ենթարկվել Երաժշտագիտություն, Մայրենի, Գրականություն, Հայրենագիտություն, Հայոց պատմություն, Հին աշխարհի պատմություն, Համաշխարհային պատմություն, Հայոց եկեղեցու պատմություն, Հասարակագիտություն, Անգլերեն, Ռուսաց լեզու դասագրքերը):

Մեր ուսումնասիրության մեջ հետխորհրդային զանգվածային լրատվամիջոցներից հիմնականում անդրադարձել ենք էլեկտրոնային ու տպագիր մամուլին, մասնակիորեն նաև՝ հեռուստատեսությանը, իսկ խորհրդային զանգվածային միջոցներից՝ տպագիր մամուլին: Առաջինների շարքում անդրադարձել ենք հետազոտության մասնակիցների կողմից ամենից շատ ընթերցվող երեք թերթերի՝ Առավոտ, Ազգ և Նյուզ.ամ (News.am): Խորհրդային մամուլից անդրադարձել ենք Ավանգարդ և Սովետական Հայաստան թերթերին:

Հաջորդ տեղեկատվական միջոցը, որին անդրադարձել ենք, և որը հարցվողների կողմից նշվել է որպես տեղեկատվության առաջնային միջոցներից մեկը՝ հեռուստատեսությունն է: Սույն աշխատանքում անդրադարձել ենք երեք հեռուստաընկերությունների՝ Արմենիա, Շանթ և Հ1՝ առաջնորդվելով հարցվողների կողմից առավել դիտվելու հանգամանքով:

Մշակույթի ընկալման ձևավորման վրա Ֆորմալ գործոնների շարքում որոշակի կարևորություն կարող են ունենալ նաև Հայաստանում մշակույթի ոլորտը պաշտոնապես վերահսկող կառույցի՝ Մշակույթի նախարարության, և ՀՀ կառավարության կողմից ընդունված օրենքներն ու իրականացված միջոցառումները: Այդ առումով առանձնահատուկ արժեք է ներկայացնում Մշակույթի նախարարության կայքէջում զետեղված տեղեկությունները: Ենթադրվում է, որ կայքէջը հանրության կողմից ընդունվում և կարևորվում է որպես մշակույթի վերաբերյալ տեղեկատվությունների հավաստի և առաջնային աղբյուր:

Իրականացված հետազոտությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրային ընկալումները ձևավորող խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանների ֆորմալ գործոններն ունեն առավելագույն դեր հանրության ընկալումների ձևավորման վրա. երևույթն ընկալվում և մեկնաբանվում է նույն հարթության վրա: Չնայած այն հանգամանքին, որ հետխորհրդային ԶԼՄ-ներում և դպրոցական դասագրքերում որոշ առումներով արդեն իսկ նկատվում է մշակույթի՝ ավելի լայն համատեքստում ներկայացման միտում, մշակույթի շուրջ տարբեր դիսկուրսների ստեղծման փորձեր, սակայն այն ընկալումների մակարդակում դեռևս փոփոխությունների չի հանգեցրել, քանի որ հանրության մի ստվար մասի ընկալումներում դեռևս գերիշխող են խորհրդային հաբիթուալ մոտեցումները:

### 3.3 Մշակույթի հանրային ընկալումներ ձևավորող ոչ ֆորմալ գործոնները

Շարունակելով խոսել մշակույթի հանրային ընկալումը ձևավորող գործոնների մասին՝ աշխատանքի այս հատվածում անդրադարձել ենք վերջինիս ոչ ֆորմալ (հաբիթուալ) տեսակներին: Հաբիթուալ ձեռքբերովի կայուն նախահակումների համակարգ է, որը չի ենթադրում գիտակցական նպատակադրում, քանի որ այն ձևավորվում է երկարատև գործընթացում, տարբեր պատահականությունների, արգելքների ու հնարավորությունների հիման վրա, որոնց, ի վերջո, մարդը հարմարվում է, և որպես տևական փորձ՝ հետագայում դժվարությամբ է հրաժարվում դրանցից: Հաբիթուալ սպահովում է անցյալի փորձի ակտիվ ներկայությունը, այսինքն այն անցյալի գործունեության ներկայությունն է: Մյուս կողմից, սակայն, ընկալումների ձևավորման պատճառները միայն կրթական հիմքերի վրա դիտարկելը՝ բացառելով սոցիալիզացիայի գործընթացը՝ սխալ է: Հաբիթուալ գործոնների դիտարկումը թույլ է տալիս նաև բացատրել տարբեր սոցիալական դասերից սերող երեխաների անհավասար կրթական նվաճումների առկայությունը: Այսինքն, ակադեմիական հաջողությունը չպետք է դիտարկել միայն որպես բնության շնորհ, իսկ կրթական ներդրման արդյունքը չափել միայն դրամական ներդրումներով (կրթական ծախս, կրթության վրա ծախսվող ժամանակ):

Այսինքն, մշակութային կապիտալի յուրացման համար շատ կարևոր են ընտանիքում և առաջնային սոցիալականացման ընթացքում ձեռք բերված նախահակումները:

Այս ենթագլխում մշակույթի հանրային ընկալումները ձևավորող ոչ ֆորմալ (հաբիթուալ) գործոնների շարքում անդրադարձել ենք հարցվողների զանազան նախահակումներին, մասնավորապես՝ ինքնագործ խմբակների և տարատեսակ միջոցառումների մասնակցելուն, ժամանցի և ազատ ժամանակի կազմակերպման եղանակներին, ժամանցավայրերի ընտրությանը և այլն:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հանրային ընկալումը ձևավորող ոչ ֆորմալ գործոնների հիմքում հիմնականում ծնողների հաբիթուալ է, քանի որ նախասիրությունների, խմբակների հաճախելիության

ուսումնասիրությունից երևում է, որ դրանք ընտրվել են հիմնականում ծնողների նախընտրությամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համացանցն այսօր դարձել է տեղեկատվական առաջնային աղբյուրներից մեկը՝ կարևոր ենք համարում նաև այդ տիրույթում մշակույթին վերաբերող անդրադարձներին անդրադառնալը՝ դիմելով Գուգլ որոնողական համակարգին:

Փաստորեն, ինչպես մեր հետազոտության մասնակիցների մշակութային ընկալումներում, այնպես էլ համացանցում ներկայացված «մշակույթ» թեմաներում գերակշռում են մշակույթի արվեստաբանական մոտեցումները: Այսինքն, համացանցում որպես մշակույթ ներկայացվող թեմաները՝ թատերական, նկարչական փառատոններ, ֆիլմերի ցուցադրություններ, երաժշտական երեկոներ, գրքերի ցուցահանդեսներ և այլն, իրենց ազդեցությունն են ունենում հանրային ընկալումների ձևավորման վրա, քանի որ մշակույթի այդ նույն մոտեցումները հանդիպում են նաև հարցվողների կողմից տրված մշակույթի սահմանումներում:

### **Եզրակացություններ**

Հիմնվելով ատենախոսական աշխատանքում արդի Հայաստանում մշակույթի հանրային ընկալումներին վերաբերվող մեր դիտարկումների վրա՝ ներկայացնենք դրանց ամփոփ նկարագրությունը.

➤ ***Մշակույթի սահմանների բնութագիրը հանրային ընկալումներում.*** Ա) Մեր հետազոտության արդյունքների քննությունը ցույց է տալիս, որ հարցվողներն այլ երևույթների շարքում իբրև մշակութային առանձնացնում են գլխավորապես արվեստի ստեղծագործությունները: Հարցվողների 51%-ի կողմից մշակույթն ընկալվել է սահմանվել է որպես արվեստի ոլորտներ: Ընդ որում, այդ խմբում գերակշռող թիվ են կազմում 45-64 տարիքային խմբերի հարցվողները, որի հիմնական պատճառն, ինչպես պարզ դարձավ հետազոտության արդյունքում, Խորհրդային Միության կողմից իրականացված քաղաքականությունն էր: Իսկ այնպիսի ակնհայտ մշակութային ֆենոմեններ, ինչպիսիք են պատկերացումները, հավատալիքները, նորմերը, հաղորդակցությունը և այլն՝ սովորաբար ուշադրության չեն առնվում: Երկրորդ կարևոր դիտարկումը վերաբերում է նրան, որ իբրև մշակույթ ընկալվող երևույթները հիմնականում դիտարկվում են որպես գործունեության արդյունքներ և ոչ թե միջոցներ: Որպես գործունեության արդյունք մշակույթը հարցվողների կողմից սահմանվում է՝ «այն ինչ մեզ տրված է ի վերուստ», «մարդկության զարգացման ընթացքում ստեղծված արժեքների ընդհանրություն», «Մատենադարան», «պիոներ պալատ», «հնությունները», «անցյալը», «ինչը դարերի ընթացքում ստեղծվել է» և այլն: Միայն 9 հարցվողների (1.2%-ի) կողմից է մշակույթը սահմանվել և դիտարկվել որպես գործունեության միջոց: Երրորդ՝ մշակույթի ընկալումը գլխավորապես էլիտար է: Մշակույթի նման ընկալման հիմքերը գալիս են խորհրդային ժամանակաշրջանից, երբ խորհրդային կառավարության իրականացրած քաղաքականությունում առանձնացվում էին բարձր/էլիտար և ցածր արվեստներ: Հարցվողների պատասխաններում այն արտահայտվում է հետևյալ

սահմանումներով՝ «ժողովրդի գիտական մակարդակը բարձրացնող միջոց», «տվյալ երկրի կամ տարածաբանի զարգացման աղբյուրը», «բարձր գիտակցություն» և այլն: Չորրորդ՝ իբրև մշակույթ ընկալվող փաստերը մեծամասամբ վերաբերվում են կոնկրետ էթնիկ խմբի գործունեության արդյունքներին: Հարցվողների պատասխաններում այն արտահայտվում է հետևյալ ձևակերպումներում՝ «ազգային կոթողները», «հայկական գորգերը», «մեր լեզուն», «հայ ժողովրդի անցած ուղին», «մեր պատմությունը», «մեր երկրի արտաքին տեսքը», «մեր ազգի տեսակին բնորոշ դրսևորումները» և այլն: Հինգերորդ՝ մշակութային ընկալվող երևույթներն ենթակա են ընդամենը պահպանման և ժառանգման: Գրեթե չեն դիտարկվում դրանց առօրեական և անհատական նշանակությունները, ինչպես նաև՝ դրանց վերանայման և փոփոխման հնարավորությունները: Բ) Իբրև մշակույթ ընկալվող երևույթները գլխավորապես անցյալի փաստերն են, այսինքն՝ լիցքավորված են պատմականությամբ: Հարցվողների 15.4%-ի ընկալումներում ժամանակային առումով գերակշռում են մշակույթի՝ ավանդականի, անցյալի հետ կապված մոտեցումները՝ «ավանդույթ», «սովորույթ», «հնություններ», «կարծրատիպ», «այն ինչ դարերի ընթացքում է ստեղծվել», «մեր հին ունեցվածքի պեղումները», «հին Հայաստանը» և այլն: Մշակույթը ժամանակակից տեսանկյունից է ընկալվել միայն երկու հարցվողի մոտ (0.2%)՝ իբրև «ստրիպտիզ» և «այսօրվա շոու բիզնեսը»: Ի դեպ, մշակույթի որպես ժամանակակից գործընթացներ ընկալելու հարցում մեծ ներդրում է ունեցել մշակութային կապիտալի ձեռքբերումը, քանի որ նման ընկալումը հանդիպում է բացառապես երիտասարդ (25-34 տտ.) և բարձրագույն կրթությամբ հարցվողների շրջանում: Գ) Մշակույթը կարևորվում է մակրոսոցիալական հարթությունում: Հարցվողների շրջանակներում ավելի շատ հանդիպում են մշակույթի համապարփակ-օբյեկտիվ ընկալումները (10.7%): դրանք վերաբերվում են քաղաքականությանը, գիտությանը, կրոնին, բնապահպանությանը, սպորտին և տուրիզմին: Դ) Չնայած այն հանգամանքին, որ մշակույթի լոկալ և գլոբալ ընկալումներում հարցվողների թվաքանակի, սեռային և տարիքային բաշխվածքների առումներով էական տարբերություններ չկան՝ խնդրի ընկալման հարցում ակնհայտ է մշակութային կապիտալի ազդեցությունը. մշակույթի գլոբալ ընկալումները գերակշռում են բարձրագույն կրթություն ունեցող հարցվողների շրջանում:

➤ ***Մշակույթի գործառույթների բնութագիրը հանրային ընկալումներում.***

Խնդիրը դիտարկել էինք հանրությանն առավել մատչելի և հասանելի տեսանկյունից՝ ազգի գոյատևման և զարգացման (ակնկալելով, որ հանրային ընկալումներում մշակույթի գործառույթներն այնքան տարբերակված չեն, ինչպես, որ ներկայացվում է մասնագիտական գրականությունում): Մակայն, մշակույթի գործառույթների այդչափ նեղացված ներկայացնելուց հետո էլ՝ առաջադրված 11 ոլորտների շարքում այն զբաղեցրել է ութերորդ տեղը: Այսինքն՝ հանրային ընկալումներում մշակույթի իրականացրած ազգապահպան և զարգացման գործառույթը չի համարվում առաջնային և կարևոր, ավելին, չի գիտակցվում



մշակույթի՝ նման գործառույթ իրականացնելը: (Այդ գործառույթն իրականացնող ոլորտներ են համարվում՝ զինված ուժերը, կրթությունն ու տնտեսությունը):

➤ ***Արդի մի շարք հիմնախնդիրների և մշակույթի փոխառնչությունները հանրային ընկալումներում.*** Այս փոխառնչությունները բացահայտելու նպատակով առանձնացրել էինք երկրում առկա մի շարք հիմնախնդիրներ, որոնց մասին պարբերաբար բարձրաձայնվում է և՛ ՋԼՄ-ների, և՛ կառավարության, և՛ հասարակության կողմից. դրանք են՝ ինքնասպանություն, ամուսնալուծությունների թված, տնտեսական և էկոլոգիական ճգնաժամ, կոռուպցիա, արտագաղթ, ծնունդների թվի նվազում, աղքատություն, գործազրկություն, սրտանոթային հիվանդությունների տարածում և կրթական համակարգում առկա խնդիրներ: Այսպիսով՝ շատ կարճ ձևակերպելով կարելի է ասել, որ արդի Հայաստանում մշակույթի հանրային ընկալումը հիմնականում հանգում է «մշակույթը մշակույթի համար» բանաձևին: Հարցվողների մեծամասնությունը դժվարություն է ունեցել տեսնելու մշակույթի և մի շարք այլ ոլորտների/հիմնախնդիրների միջև համակարգային կապեր կամ դրանք դիտարկել որպես մշակութային երևույթներ: Սակայն, տարիքային առումով առավել երիտասարդ (16-34տտ.), իսկ կրթական ցենզի տեսանկյունից բարձրագույն կրթություն ունեցող հարցվողների ընկալումներում արդեն իսկ նկատվում են մշակույթի և այլ ոլորտների/հիմնախնդիրների միջև փոխկապակցման միտումներ:

➤ ***Մշակույթի հանրային ընկալումներ ձևավորող ֆորմալ գործոնները.*** Վերոհիշյալ գործոններից անդրադարձել էինք՝ կրթական համակարգում (դպրոցական դասագրքերում), ՋԼՄ-ներում՝ էլեկտրոնային և տպագիր մամուլում, հեռուստատեսությամբ, և պետական մարմինների (Մշակույթի նախարարություն, ՀՀ կառավարություն) կողմից մշակույթի վերաբերյալ ներկայացվող տեղեկատվությանը և իրականացվող միջոցառումներին: Այսպիսով, հանրային ընկալումները ձևավորող խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանների ֆորմալ գործոնների ուսումնասիրության արդյունքում հստակորեն երևում է վերջիններիս ունեցած առավելագույն դերը հանրության ընկալումների ձևավորման վրա. երևույթն ընկալվում և մեկնաբանվում է նույն հարթության վրա: Չնայած այն հանգամանքին, որ հետխորհրդային ՋԼՄ-ներում և դպրոցական դասագրքերում որոշ առումներով արդեն իսկ նկատվում է մշակույթի՝ ավելի լայն համատեքստում ներկայացման միտում, մշակույթի շուրջ տարբեր դիսկուրսների ստեղծման փորձեր, սակայն այն ընկալումների մակարդակում դեռևս փոփոխությունների չի հանգեցրել, քանի որ հանրության մի ստվար մասի ընկալումներում դեռևս գերիշխող են խորհրդային հաբիթուալ մոտեցումները:

➤ ***Մշակույթի հանրային ընկալումներ ձևավորող ոչ ֆորմալ գործոնները.*** Մշակույթի հանրային ընկալումները ձևավորող ոչ ֆորմալ (հաբիթուալ) գործոնների շարքում անդրադարձել էինք հարցվողների զանազան նախահակումներին, մասնավորապես, ինքնագործ խմբակների և տարատեսակ միջոցառումների մասնակցելուն, ժամանցի և ազատ ժամանակի կազմակերպման եղանակներին, ժամանցավայրերի ընտրությանը և այլն: Արդյունքում պարզ

դարձավ, որ հանրային ընկալումը ձևավորող ոչ ֆորմալ գործոնների հիմքում հիմնականում ծնողների հաբիթուն է, քանի որ նախասիրությունների, խմբակների հաճախելիության ուսումնասիրությունից երևում է, որ դրանք ընտրվել են հիմնականում ծնողների նախընտրությամբ:

Այսպիսով, ընկալումն ինքը մշակութային երևույթ է, մշակութային որոշակի գործընթացների արդյունք: Այն ձևավորվում է երկու գործոնների հիման վրա՝ հաբիթուալ (անգիտակցաբար յուրացվող գիտելիք) և կապիտալային (նպատակադրված կերպով ձեռք բերվող գիտելիք): Թե՛ հաբիթուալ, թե՛ կապիտալային տեսանկյունից մեր հարցվողների ընկալումները հիմնականում կրում են խորհրդային ժամանակաշրջանի ազդեցությունը: Դրան բնորոշ դրսևորումներից մեկն այն է, որ նշված ժամանակաշրջանում ապրած և կրթություն ստացած հարցվողների պատասխաններում մշակույթն անհանգստացրել է տնտեսությանը, ինչպես նաև մշակույթի կազմակերպման և ձևակերպման գործում կարևորվում է կառավարողների նախաձեռնողականությունը: Խորհրդային ժամանակահատվածին բնորոշ ընկալումներին հատուկ է մշակույթի ընկալման խմբային բնույթը, այսինքն՝ արժեքավոր է այն, ինչը ծառայում է խմբին՝ ազգին, հասարակությանը, աշխատանքային կոլեկտիվին:

Իմի բերելով վերոհիշյալը կարող ենք փաստել, որ արդի հայաստանյան հանրության մեջ գերիշխող մշակույթի ընկալումները նպաստում են մշակույթի այն իներտ կարգավիճակին, որը գոյություն ունի ներկայում: Մի կողմից՝ մշակույթի սահմանների և գործառույթների սահմանափակությունը, մյուս կողմից՝ հանրային կյանքի տարբեր ոլորտների հետ դրանց կապի անտեսումը նպաստում է այն հսկայական ներուժի օգտագործումը բացառելուն, որը պարունակում է մշակույթը: Մշակույթն, ըստ գոյություն ունեցող ընկալումների, մնում է նույնքան անհասանելի, որքան ավետարանչական պատումները՝ մինչև Դա Վինչիի և վերածննդի ժամանակները: Վերածննդի ժամանակ է, որ այդ պատումները մոտեցվեցին դիտողին և ընթերցողին՝ այդպիսով վերջիններիս դարձնելով պատումներում նկարագրվող գործողությունների մասնակից (Ինչպես, օրինակ, գրականության ոլորտում Դ. Ալիգիերիի «Աստվածային կատակերգությունը», Նարեկացու ստեղծագործությունները, Բ. Դեպերիենի «Աշխարհի ծնողան», նկարչության բնագավառում՝ Ջոտտոն, Դա Վինչին, Միքելանջելո Կառավաջոն, Ռեմբրանտը, Բոտիչելլին, Ճարտարապետության մեջ՝ Ռաֆայելը, Միքելանջելոն, Դոնատելլոն և այլք:): Այսինքն, այդ պատումները դարձան առօրեական կյանքի և անհատական մակարդակներում ռեֆլեքսիայի առարկա: Հասարակական գիտություններում գրեթե նույն հեղափոխական նշանակությունն ունեցան Մ. Վեբերի հեղինակած մի շարք աշխատությունները, որոնցում մշակույթը ներկայացվեց իբրև անհատի սոցիալական գործողությունները մոտիվացնող առաջնային գործոն: Այդպիսով, ակնհայտ դարձավ, որ մշակույթը կարող է «հաղթահարել» իր մեկուսի և անանցյալ, որոշակի իմաստով՝ «առասպելական» կարգավիճակը և դառնալ մակրո և միկրո սոցիալական իրականությունները կազմակերպելու գործուն միջոց: Քանզի, թե՛ համահասարակական հիմնախնդիրների առումով (արտագաղթ, գործազրկություն,

ծնելիության նվազում և այլն), թե՛ անհատական խնդիրների (միջանձնային հաղորդակցություն, որոշակի իրավիճակների ադապտացիա և այլն) հարթությունում մշակութային փաստերը ոչ թե հանդես են գալիս իբրև օժանդակ գործոններ, այլ՝ որպես հիմնապատճառներ և շարժառիթներ: Նշվածի հետևանքում մշակույթը դադարում է ներկայանալ ստատիկ վիճակում և հնարավոր է դառնում դրա փոփոխական լինելու ռեֆլեքսիան: Անօրեականության մարդաբանության տեսանկյունից այն այլևս ոչ թե տրված կառուցվածք է, այլ կառուցվող ֆենոմեն: Անկնկալվող ծայրահեղ մոտեցումից խուսափելու և սուբյեկտիվիզմի ու ծայրահեղ կոնստրուկտիվիզմի ծուղակում չհայտնվելու համար, այդուհանդերձ, պետք է ընդունել, որ մշակույթը հաճախ ներկայանում է հենց կառուցվածքի վիճակում՝ այսպես կոչված հաբիթուսի հարթությունում: Այդ առումով ամենաարդյունավետը մոտեցումների մեջ, թվում է, կոնստրուկտիվ ստրուկտուրալիստական մոտեցումը, որը հաշվի է առնում մշակույթի թե՛ կառուցվածքային լինելը և թե՛ կառուցող լինելը: Ըստ այդմ՝ բացվում է նաև կառուցվածքը վերակառուցելու հեռանկարը: Տվյալ դեպքում՝ խորհրդային հաբիթուսը ընկալումները փոխակերպելու հեռանկարը: Ինչպես ճիշտ են նկատում կոնստրուկտիվ ստրուկտուրալիստները (որոնց ամենահայտնի ներկայացուցիչն է Պ. Բուրդյեն). «Անհնար է հաջողությամբ ամբողջապես փոխակերպել հասարակությունը՝ առանց հաբիթուսի վերածնունդի և միկրոսոցիալական պրակտիկաները ցանկալի ուղիով տանելու գործում հաջողության հասնելու»: Անկասկած է, որ այդ փոփոխությունների համար արդյունավետ կարող են լինել նույն այն ուղեփողերը, որոնք ձևավորել են խորհրդային ժամանակաշրջանում բնորոշ մշակույթի ընկալումները, այսինքն՝ խոսքը կրթական ինստիտուտների, ՋԼՄ-ների և տեղեկատվության փոխանցման այլ միջոցների (գովազդ, տարբեր միջոցառումներ և այլն) մասին է: Ի դեպ, ինչպես արդեն նշել ենք, մի շարք հարցվողների պատասխաններում արդեն նկատելի են դրա պոզիտիվ դրսևորումները, մասնավորապես, մշակույթին վերաբերվող առարկաների և գրականության ծավալների մեծացումը բուհերում, և ՋԼՄ-ներում մշակույթին առնչվող թեմաների ավելի հաճախ ներգրավումը շահեկանորեն նպաստել են հարցվողների կողմից մշակույթի ավելի լայն և գործառութային ընկալմանը:

**Առենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրատարակումներում**

1. Թորոսյան Մ., Մշակույթի հասարակական ընկալումները.-HABITUS 1. Մարդաբանական և հնագիտական ուսումնասիրություններ: Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2004, էջ 97-101:

2. Թորոսյան Մ., Մշակույթի հարցերի ընկալումը ՀՀ էլեկտրոնային մամուլում.- Լրաբեր, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2013, էջ 335-339:

3. Թորոսյան Մ., Մշակույթ-անօրեականություն փոխառնությունները հայաստանյան արդի հանրային ընկալումներում: -Կանթեղ, Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2016, էջ 73-86:

## ОБЩЕСТВЕННОЕ ВОСПРИЯТИЕ КУЛЬТУРЫ В СОВРЕМЕННОЙ АРМЕНИИ

### Резюме

Целью данной тезисной работы было представить общественное восприятие культуры в современном армянском обществе. Главными задачами данной работы было выяснить, как культура воспринимается, и каким образом восприятие культуры воспроизводится на общественной и частной практике. Восприятия, в свою очередь, являются социально-культурными феноменами и формируются в определенных исторических условиях, под влиянием некоторых факторов и обстоятельств. Восприятия также воздействуют на выбор, организацию и интерпретацию сигналов внешнего мира. Следующим наиболее важным вопросом данного тезиса было изучение факторов и обстоятельств формирования восприятия культуры. С этой целью мы рассмотрели и проанализировали представленную информацию и осуществляемые мероприятия касающиеся культуре в системе образования (в школьных учебниках), в СМИ - в электронной и печатной прессе, по телевидению и в органах государственной власти (в Министерстве культуры, в правительстве РА).

Тезисная работа состоит из введения, трех глав, заключения, библиографии, приложения. Каждая глава включает в себе три заголовка. В приложении представлены также диаграммы и таблицы.

В заголовке первой главы под названием "Механизм формирования и воспроизводства общественного восприятия" представлено одно из основных понятий используемых в работе -восприятие и психологический, антропологический взгляды на него. Здесь говорится о том, что такое восприятие, как оно формируется, передается и воспринимается обществом. Рассматриваются методы воздействия восприятия на повседневное поведение, сходства и различия общественного мнения и общественного восприятия. В этой главе также представлены основные различия структурализма и конструктивного структурализма, понятия габитуса, габитуализации, советского габитуса, различия и особенности восприятия советских и постсоветских поколений и факторы определяющие их практику.

Во второй главе, под названием "Общественное восприятие культуры и ее аспекты", представлены пределы, сферы общественного восприятия культуры, функций и роли приписываемые культуре. В том числе мы рассматриваем временной и всеобъемлющий аспекты и их особенности общественного восприятия и понятия культуры, концепции и формулировки, которые используются при определении культуры. Мы постарались увидеть, какие функции приписываются культуре, и какое место она занимает среди различных сфер общественного и национального значения (вооруженные силы, экономика, внешняя политика, охрана окружающей

среды, социальное обеспечение, спорт, образование, религия, наука, законодательные и правоохранительные органы). В конце этой главы мы выделили ряд проблем, которые существуют в стране, и рассмотрели связь между этими проблемами и культурным фактором.

Последняя глава данной работы названа "Формальные и неформальные факторы формирующие общественное восприятие культуры". Целью данной главы было изучить те основные факторы, которые являются основой для формирования общественного восприятия культуры: школьные учебники, пресса, телевидение, государственные мероприятия, интернет, хобби, посещение кружков и т.д. Принимая во внимание тот факт, что Армения - страна постсоветского периода, и учитывая важность влияния советских политических институтов на нынешние общественные, политические, экономические и культурные сферы, мы обратили внимание на политику Советского Союза и ее влияние на постсоветскую Армению. Мы также рассмотрели использование институтов и средств формирующих восприятие в советском и постсоветском периоды.

Таким образом, само восприятие является культурным феноменом, результатом определенных культурных процессов. Оно формируется на основе двух факторов - габитуальном (бессознательно усвоенные знания) и капитальном (сознательно приобретенные знания). Поэтому, для изменений, имеющих общественное значение, очень важны габитуальные и капитальные изменения, а для последних - изменения восприятия культуры. Без сомнения, для этих изменений могут быть эффективными те средства, которые формировали типичные восприятия культуры советского периода, то есть, речь идет об учебных заведениях, СМИ и других средствах передачи информации (рекламы, разные мероприятия и т.д.).

Meline G. Torosyan

## **Public Perceptions of Culture in Modern Armenia**

### **Summary**

The aim of the present dissertation is to study the public perceptions of culture in modern Armenian society. The key questions of the research work are: How is the culture perceived in the society and how are these perceptions of culture reproduced in public and individual practices?

Perceptions themselves are socio-cultural phenomena formed in certain historical conditions, under the influence of certain factors and circumstances directing the choice, the formation and the interpretation of the impulses from outside world. The next important topic examined in this dissertation is the study of the factors and the

circumstances forming the perceptions of culture. For this purpose, the represented information on culture and the implemented cultural activities have been evaluated in the following institutions: Educational System (textbooks), Mass media (online and in printed press), TV and State Agencies (the Ministry of Culture, the Government of the RA).

The chapters involved in the research work consist of an introduction, three chapters, a conclusion, a bibliography and an appendix. Each chapter has three subchapters. Diagrams and tables can be found in the appendix.

Chapter 1: The Mechanism of the Formation and the Reproduction of Public Perception: One of the main concepts in my research work is the concept of perception. In this chapter anthropological and psychological views of perception are discussed. “What is “perception”?” “How is it formed, transferred and publicized?”, “In what way does it affect everyday behavior?”, “What are the similarities or the differences of public opinion and public perception?” These are the questions we tried to clarify in the framework of this chapter. We also examined the main differences of structuralism and constuructive structuralism, the concepts of habitus, habitualization, Soviet habitus, differences and peculiarities of the perceptions between Soviet and Post-Soviet generations, as well as the factors determining the practices of the latters.

Chapter 2: The Public Perception of Culture and Its Aspects: Here we study the boundaries of public perception of culture, the fields included in it, as well as the functions and the roles ascribed to culture. We also discussed the temporal and the global aspects on the public perception of cultural, the peculiarities of these aspects, the used concepts and the definitions in defining “culture”. We tried to find out what role it has in the public and national spheres (in armed forces, economy, foreign policy, ecology, politics, social security, sports, education, religion, science, legislation and law). At the end of this chapter we outlined number of issues in Armenia and analyzed the link between these problems and the cultural factors.

Chapter 3: Formal and Non-Formal Factors Forming the Public Perception of Culture: The purpose of the last chapter is to study the main factors which are the basis for the formation of public perceptions on culture. These factors include school textbooks, press, television, state events, internet, hobbies, trainings etc. As far as Soviet political institutions have their impact on Post-Soviet Armenian social, political, economic and cultural life, we studied the politics of Soviet Union and its influence on Post-SovietArmenia. We also examined the realization of the institutions and leverages which formed the perception of culture in Soviet and Post-Soviet times.

Thus, perception itself is a cultural phenomenon, a result of certain cultural processes. It is formed by two factors: habitual (knowledge obtained unconsciously) and capital (knowledge obtained consciously). So, it is important for social changes to make habitual and capital changes which require changes of the perceptions of the culture. Doubtless, the efficiency of these changes is based on the same factors which formed perceptions typical to Soviet times (i.e. educational institutions, Mass media and other informational sources like advertisement, various events etc.).